



84. ՕՅԵՆ ՎՃԵՐ ՏԻՒՑՈՒՄԸ, ԹԸՐՑՆԵՍ, ԵՏ
ԿԸՏԵՇՈՒՍԱ ՔԵԶ ԿԸՄԵ

Մին մարթ հղբավը քյինալիս մին սառած օց ա պըտահում,
մեխեկ ա կյամ, յոր ա օնում տինում ծուցումը, թըթըցընում, օցը
մխըրե օշը կըլիխն ա հըվաքում, օզում ա, վըեր էտ մարթին կըծե,
էտ մարթը օցեն շատ ա դաշանք-պըղատանք անում, ասում ա.—
Պա ես քեղ հղեցը տեսն սառած, հալա ինգյած, քեղ կուրցըրած, ես
քեղ լուվոթում ըրե, եր կալի տիրի ծուցումըս, երկան պըհեցե, քեղ
թըթըցըրե, հանցու տու լավ ինիս, մեհենգյ ես քեղ հինչ ը՞մ ըրալ,
վըեր տու օզում ըս ինձ կըծես ըսպանես Օցը թա՛ չէ՛, վըեր լէ՛,
հիշքան օզում ըս դաշանք-պըղատանք ըրա, մին ա, ես քեղ պիտի
կըծեմ-ըսպանեմ, ըրկուվըննանում անա երը փիս պեն չի կա էս
ըխշարքումըս, ըրկուվըննանում լուվոթում ընելի չի, մզափուն ա,
վըեր էս լուս ըխշարքումըս նա ապիե, չէ՛, վըեր չէ՛, նըհախ տըեղն
ըս տու ինձ ասում, թա ինձ ըզադի, մին ա քեղ պիտի կծեմ, ազու
տամ, ըսպանեմ:

Էտ մարթը ճարը կտրած, ասում ա.—Դե վըեր տու իմ ըրած
լուվութունեն տեղակ ինձ օզում ըս կծես, աղու տաս, ըսպանես,
քյինանք մին քանի օրիշ մարթ, հեյվան յա օրիշ պեն կըպըտահե,
կըհըրցնենքյ, թա վըեր նահանք կասեն ես մեղավըեր ըմ, էն
վախտը ինձ կըկծես, ըսպանես, թա չէ, էլլա ես իմ հղես կըբյի-

Նամ, առու քունքը Օցը համաձայնվում ա՝ վրեր տըեսնում ա մարթը շատ ա դաշանք անում, միլըմիշ կյամ, էլ կարում չի աթկազ անե, ասում ա.—Թյինանք, բայց մին ա, հինչ էլ օղում ա ինի, ես քեզ կը ծրլական ըմ ըսպանեմ, թողիմ ըստեղ, հզե ինիմ, Մարթն ասում ա.—Լավ, հինչ վրեր ա, հինչ կանես, կանես, հալա թյինանք հըրցնենք, ետնան:

Դե մարթին հուլս ա իլալ, վրեր հզեցը մին օրիշ հելվան, դուշ, գաղան պըտահե, նահանց անա հըրցընեն, ըսըլական ըն էտ մարթը քեզ վրել մին պին չի ըրալ, քեզ սառած տըեղան, քեզ մահա ըզադալ ա, հոր ը՞ս տրան փիսոթում անում, հինչու հե՞տե լըս օղում տրան ըսպանես, տա վրել մին մեխի էլա օնե վուլ:

Էտ մտկավը տահանք հզե լըն ինհիմ, թյինամ: Ետա ըն թյինամ, թա խրեզյ, հզեցը մին շուրացած տանձի ծառ ա պըտահում, էտ ծառին նհնետ էտ մարթը նազլ ա անում, վրեր ինքյը հզեննի թյինալիս իստի-իստի պին ա պըտահալ՝ օցեն տեսալ ա մին փոսու մաշի սառած, վրեր ինգյած, թամամ նափաւոր կտրած, էն ա իլալ մըռնելիս, ուրան մեխսկն ա եկալ, եր ա կալալ տիրալ ծուցումը, մին խլլա ծուցումը պահալ, թըրցրալ, վրեր մխըրե ետ կյա, մեռնե վուլ: Ետնան թըրցնալան ետը ետ ա տըեռալ, ուզեցալ ա ինձ կըծե ըսպանե, հիշքան խնթրալ ըմ, զաշանք-պըդատանք ը՞՛ ըրալ, վրեր ինձ պից թողի թյինամ իմ դարդիս կենամ, պից չի թողալ, ճարըս կըտրած նորից ըմ զաշանք-պըդատանք ըրալ, հիշքան ասալ ըմ, նա վրեննը իվիլի յա պընզըրալ, ասալ՝ չէ՛, վրեր չէ՛, ես քեզ պիտի կըծեմ, ըսպանեմ: Մինգյել ասալ ըմ՝ գե վրեր օղում ըս ինձ անտեղի տեղն ըսպանես, թյինանք մին հելվան, կաղան յա օրիշ պին կինի, հըրցնենք, ետնան. հզե լընք իլալ եկալ, ըստեղ հենց քեզ ընք պըտահալ, հասե՛, հինչ վրեր նազլ ըրե, պինք իստի յա իլալ, ես մեղավեր ը՞մ, վրեր սրան մահա ըզադալ ըմ, իմ ըրած չումըթումեն տեղն օղում ա կծե, ինձ ըսպանե:

Սառը տրեղ ետ ա տըեռնում, ասում.—Իտի յէլ հարկավեր ա իլալ, ըրկուվընանում հել լինվոթուն ընելի չի, ես էսքան տարվա ծառ ըմ, հալա վրեր շահիլ ըմ իլալ, տակըս պահանվ տալիս ըն իլալ, ճիրիիս-քըզնելիս ըն իլալ, հանցու լավ բար տամ. ես էլ պարտք ըմ մնացալ, մինին էրկու լոնվոթուն ըմ ըրալ, հիշքան օժըս պատալ ա մըեծ-մըեծ, իլլամ-իլլամ տանձ ըմ տուվալ ուրանց, մին խոսկավ բախուծը բարըս կերալ ըն, թանձը շուքես տակեն պարանց ինգյալ, քոն իլալ, շոքըս էլ պիմբակավ ըն իլալ յոր ունելիս, մեհնենգյ պըռավալ ըմ, հալա ինգյալ, էլ ինձ մհալ

լըն թցում, պեսու տըեղ լըն օգում տինին, էն վախտը վըեր բոլ
բար ըմ իլալ տալիս, լավ ըմ իլալ, վըեր պըռավալ ըմ, էլ կարուա
շըմ բար յոր օնեմ, փիսացնլ ըմ, էլ ինձ վըել եշում ըն, վըել ինի,
թողալ ըն անդար-ընդերու, հալա կացենն էլ յոր ըն օնում, կյամ
սաղ օրը ինձ վըեր թակում, խոխեքյն էլ մին տեղան ըն ինձ միշտ
քըրքպրանուկ անում, տրա հետե յըմ ասում, վըեր հիսանեն աս-
տուծ ջնե, անաստված զատ ա, ես լափի փուշմանալ ըմ, վըեր
էնքան լուվոթուն ըմ ըրալ, սոս ա, պիտի հիշքան կարում ըս, փի-
սոթուն անես, թա չէ, լոր ա տամ, եր ինոնմ կըլոխտ, կծեն ըսպանե
տրան, օց ախպեր, տի ել հարկավեր ա, ըրկուվընեանուն լուվո-
թուն ընելի չի, կծեն, կծեն, թող սըերտը հուվանա, թա չէ վըեր
սաղ կենա, էտ էլ ա նահանց մնան ընենական:

Սաոր վըեր տի յա ասում, օցը մարթին ասում ա.—Տեսէ՞ր,
հոքը անա յէլ հըրցնենքյ էտ ըն ըսըլական, ըստեղ կըժեմ, ըսպա-
նեմ: Մարթը վըեր տըեսնում ա՝ էլ թաշըրը չի կա, օցը պիտի Շէ-
րան կծեն ըսպանե, ասում ա.—Դե լավ, մին ա, ինձ կծելը կծըլա-
կան ըս, քըզանա վըել մին պեն չի քյինամ, քյինանք մին օրիշ
պեն էլ կըպըտահե, նրանա յել կըհըրցնենքյ, ետնան տու վըս
գյինդում: Օցը թա՝ չէ, վըեր չէ, քեզ հենց ըստեղ պիտի կծեմ
ըսպանեմ, վըեր սըերտը հուվանա: Մարթը նորից ա օցեն զա-
շանք անում, թա դե լավ է, միըրե էլ քյինանք, մին օրիշ պեն
կըպըտահե, նրանա ել կըհըրցնենքյ, ետնան: Մարթը վըեր շատ
դաշանք ա անում, օցը թա՝ դե լավ, վըեր ասում ըս, էս գոնոնմ
էլ քյինանք:

Հղե յըն ինոնմ, նորըմինան քյինամ ըն, քյինամ, շատ
ըն քյինամ, թա խրեգյ, տեսնում ըն մին բըլանա դուզում մին պըռա-
ված, մաշկը յարալու, ջիդո տըեռած ծի ըրըծելիս: Մարթը մըտ-
կումն ասում ա՝ էտ ա վըեր կա, սա հալլրաթ մին խոսկ կասեն, ինձ
դզադել տա էս ցավան:

Էտ մարթը վըեր ծիլին էլ ա կլխավն անց կացածը նազը ա-
նում, ծին մին զաթում օգում ա թա օցեն ասե՝ լավ է, մեխկ ա,
հալլրաթ խուփատար կինի, պեց թողե քյինա, մինգյել վըեր Շէրան
տարը մըտոն ա քցում, սըրտեն դաղերը եր ա ինոնմ, ետ ա տըեռ-
նում օցեն ասում:—Հիշքան մտածում ըմ, ըխշարքես իրեսեն
մարթին անա երը փիս պեն չի կա, վըել լուվոթուն կըգյիդա, վըել
ամմագյ, վըել էլ մին օրիշ պեն. քանի տարե ես իմ տըեռնը հետե
պեն ըմ ըրալ, փադ ըմ կըրալ, ճակը ըմ կըրալ, դանը պեռնալ ըն
մեղաց տարալ, խոտն ըմ մաշկես տիդ տուվալ, պերալ տոն,

մինդիկ թարբելս նստալ ըն դա՛, հա դա, թշեր-ցիրեկ քշալ. քափու քրտանունքում կորալ ըմ, հինչ վըեր ըրալ ըմ լոխ ուրանց հետեւ, ամմա վըել մին կարքին կյումում ըն ինձ պահաւ, վըել կարքին տակըս քյիրալ-թիմբզբալ ըն, յա էլ մըրթըվարի տերման, խոս յա կյաղըի տումալ, կերածըս էլ միշտ ըշկըրներեն ուրվացալա, միշտ ըշկըրներեն իշեղան կախ իլամ ըմ իլալ, էտ էլ հալա խրեգլ ըն իլալ գյիղալիս, մինդիկ սաղ օրը սրան-նրան ինձ քըրեհավ տալիս ըն իլալ, ինձանավ փող ըշխոգիլիս, փող թուփ ընելիս, վըեր գըխկըվեն, մին խոսկավ սաղ օրը ինձ լըրլըրելիս ըն իլալ, փորըս էլ միշտ սոված ըն իլալ պըհելիս, կարքեն ապուռ ըըն իլալ տալիս, վըեր օտեմ, մեհենգյ վըեր պըռավալ ըմ, լափ հալա ինգլալ, վըեննըս վըեննավըս ա ինգյալ, էլ կարում լըմ ծմակը փաղու քյինամ, յա ճեղացը դան տանեմ, հանդա խոս կրեմ, յա էլ կալում լծվեմ կալ թակեմ, մաշկես ըն եկալ, ինձ պեց թողալ, անդար-ընդերու քցալ էս դուղերը, էս ա հիշքան վախու ա ևս ըստեղերյ, հասե՛ տեսնում ը՞ս, մաշկես յարան էլ հալա լոնդացալ լի, էնքան անսովիստ ըն իլալ ինձ պինըցնելիս, մեհենգյ ես հինչ ա՞սեմ, կըկա՞րեմ ասեմ թա մեխիկ ա, պեց թողե քյինա, տահանց ցեղեն մեխիկ կյալի չի, էեշ նամուս, ինսափ պեն ջօնեն, վըեր օղում ըս կծես, աղու տաս ըսպանես էտ մարթին, տի յիշ հարկավեր ա, կծե, կծե, թող ջանըս դինջանա, մեխիկը լի կյաս:

Օցը վըեր օղում ա թա մարթին կծե ըսպանես, մարթը չոքում ա, ըսկըսում լաց ինիլը, ասում ա.—Դե լիհա վըեր ինձ մեխիկը լըս կյամ, լիհա քյիրփան խուխոցըս մեխիկ եթ, իրըսնեն տափին կըմնա, եթիմ, անհար կըմըժանան, մին խրեգլ տեղ էլ քյինանթ, քալքիի մին օրիշ պեն էլ ա պըտահում, նրանա յել կըմըցնենթյ, նա հինչ վըեր կասե, ինդի յել կանես: Օցը թա՞ չէ, վըեր չէ, ամալ չի կյալ, զուր տըեղը լաց մի ինիլ, սուտըսուտ ըրտասումք մի թափել, քեզ ապրելը, կյանք տըեսնալը, խոխա պահել մըծըցնելը մղափհմ ա, տի պեները քըզետե չի, վըեր ասալ ըմ, տու պիտի ըղուվով ինդիս, մըեռնես:

Մարթը վըեր տեսնում ա՝ ախեր էլ իսկի թահըը լի կա տրանա ըզըգիկի հիտեւ, ետ ա տըեռնում օցին ասում.—Դե վըեր իմ ըրած լոնվութունեն տըեղ ինչ պեց լըս թողում, լիհա էնքան խաթիր էլ շօնեմ, վըեր միւըրե յէլ քյինանթ, քալքիի մին օրիշ պեն ա պըտահում, նրանա յէլ հըրցընենթյ:

Մարթը վըեր տի յա ասում, օցն ասում ա.—Դե լավ, վըեր շատ ըս դաշանք անում, քյինանթ:

Նորից ըն հզե ինամ, քյինամ: Մին խիլա տըեղ վըեր քյինամ
ըն, եշում ըն տըեսնում մին լափ շատ պըռաված, մազերը վըեր
թափած, հալա ինգյած շոն, ըտեղեց զոռավ շոռ ա կյամ: Էտ
մարթը ետ ա տըեռնում հիրան կլխավն անց կացածը շանն էլ նազլ
անում: Շոնը զոռավ կլթիւր պիտըրցնում ա, աշկերը շոռում, ան-
ջուկ օնում: Վըեր անջուկ ա օնում պըրծնում, ասում ա.—Հա՛, տի
յել հարկափեր ա, վըեր ինձ թա՞ր ինի, ես տրան զիւրզիւրա կա-
նեմ, տըեսնում ը՞մ, վըեր էս ըմ պըռաված, լափ հալա ինգյած,
կարում ըմ, թա չէ, գյուղում ըս իլի հինչ կանեմ: Համ ասում ա,
համ էլ ըսկում կլթիւր եկածը նազլ անելը. «Զահիլ վըխտես վըեր
վըերսկանը ծիլըվուրան ըմ իլալ վըեր քըշիլիս, արշն ան կյանկը
պիման տուս ունելիս, հիյվանեն կյողերը հզրցեն կեսան փըխճըցը-
նելիս, էն վըխտերքեն ես իմ տըեռնր հետե շատ լավ ըմ իլալ,
ինձ միշտ վըխճըցներեն նհետ զրկելիս ըն իլալ սարը, վըրսկանեն
նհետ՝ ծմակը, հիլուգյանն էլ հըյաթումը, էն ցորտ տըեղը մին
զընու ժինչիլ պըկաս ընելիս, դըրբըզեն տական կըպելիս, մին
խրեգյ ճիրալի լակ յա մին խուխու կիրած մըսու վըխսկուտ ըն ի-
լալ առաջը քըշիլիս, ըստիրիլիս, թա սաղ քշերը հաշի, հա հաշի
ծս էլ մինչև լուս հիշիլիս ըմ իլալ, քշերավն էլ սոված-ծարավ
նորըմինան հիյվանեն յա վըխճարեն նհետ սար ու լոլ քյինալիս,
էս կյողեն բուաը պահ տըեռնը դուկուղ ըրա, էս դըշաղեն հետան
պրծե ծին խըրնըցըրու փըխճըցըրու, էս կյուկին յա ըզվեսին պը-
կան փըռնե պըճնե տիր ընդեղ, վիրը, ըրածը ըշկըրնեն քուրց-
նե, վըեր քուրցըրավկուշ, մեհենգյ վըեր պըռավալ ըմ, մազերըն
էլ լոխ թափ տուվալ, կըռքընես էլ վըեր ա տըեռալ, էլ վըեշ կա-
րում ըմ հաշիմ, վըեշ էլ կըճեմ, էլ ինձ տըրոթում լըն անում, մաշ-
կես ըն եկալ, հըլաթան տուս քցալ, էտ հերիթ շի, հալա խուխոցն
էլ սովարցնում ըն, սաղ օրը հետաս քարավ ըն տամ, ալարաշ-
ալարաշ ծեն տամ, յա էլ հետաս իւանձող ըն յիրա անում, վըեր
սարավ իլած թոկքըս էլ էրին ինձանավ ծիծաղեն, մազաղ անեն,
յա էլ մին խրեգյ վըետած ջամդակ ըն շըպրտում, հանցու օտըեմ,
ըստակեմ, լեշըս տանեն քաշ-քաշ անեն, վըեր սիրտըրնեն հուվա-
նա: Դյունընիմ լըմ, թա ես տահանց հինչ փիսոթում ըմ ըրալ, ըշ-
կըրնեն հանալ ը՞մ, վըեր քշեր-ցիրեկ հիրանց մուլքյն ու ապրանքը
կյողա-դըշաղա պահալ ըմ, կյուկ-կյեղան խոեգյ տուվալ, հանցու
վըեր կըան վուշ հիրանց էլ հիրանց ըպրանքեն նհետ կյուղանան
տանեն:

Էտրանը շոնն ասում ապրձնում, ետևան օցին և տրեռնում, թա՝ կծե, մարթին աստուծ չօնն, տի յէլ հարկավեր ա, կծե, թող հոքին տռնմ կյա:

Օցը նորից ա ետ տըեռնում մարթին ասում.—Տըես՞՞ր, չո չէ շոնը, վըեր ամենաշատն ա մարթին հավադարիմ, պա մեհն նոյն հինչ կասես:

Մարթը նորըմինան ըսկսում ա օցին դաշանք անելը, օցը թա չէ, վըեր չէ, էլ կարել չըմ խաթրավլա թյինամ, էլ քեզ վըել մին փրկութուն չի կա, պիտի կծեմ ըսպանեմ: Մարթը վըեր տեսնում ա էլ օրիշ յոն չի կա, ասում ա.—Դի լավ, էս մին գլնենան էլ ինձ անցուկ կալ, ետևան հինչ կինի, կինի, էլ նրանա ետը տու վըո գյոնդում, քու սովիստը: Օցը թա՝ սովիստ-մովիստ գյոնդում լըմ, պիտի կծեմ: Մարթը թա՝ լավ, միջըր յէլ ոյինանք, էլլա կըկըծես, դե վըեր ինձ ըսպընական ըս, ըսպընական ըս, էս դինենմ էլ խոսկես անջուկ կալ, էլլա հինչ օգոսմ ըս, ինդի յել ըրա: Օցը թա՝ դե լավ, էս դինենմ էլ անջուկ կալի, բայց գյիղա, վըեր սա վերլինն ա, էլ վըել մին տըեղ թյիննական լընք: Մարթը թա՝ լավ, թյինալ լընք, հալա մեհննոյ հոյ ինինքյ, մին խրեգյ չէ թյինանք:

Նզե յըն իննում, թյինամ: Մին խիլա տըեղ վըեր թյինամ ըն, ըրըշնեն մին ազվես ա տոնա կյամ: Ազվեսը վըեր պըտահում ա, էտ մարթը էլլա ըսկսում ա դիրդհան ինիլը: Վըեր լոխ նազլ ա անում, ըսկսում օցին անա տիբըրթուն անելը՝ թա ինքյն ուրան ըրած լժութունը գյիղացալ չի, ազվեսն էլ ա մարթին անա կլնենգյատ անում, ասում սաղ օրը վըրսկընեն շըները եր կալած, ուրան հետան ըն շոռ կյամ, ըշկըրնեն միշտ ուրան մորթում յիրա յա մնացած իննում, էլ վըել սովիստ օնեն, վըել պեն, էլ ասում շըն, թա ախեր սա էլ ա ըստուծեն ըստեղծածը, սա յէլ խուրդան նոտեր օնեն, լիհա մին քանի կըպեկու հետե ծիբյ ըն տամ մուրթհան անում: Համ ասում ա, համ էլ օցին ասում:—Կծե՛, օ՛ց ախպեր, տահանց տի յէլ հարկավըեր ա, թա չէ ըխշարքումը էլ հեյվան, էլ վըել մին շուալ լըն թողել, վըեր սաղ կինա: Իտի ըսկեան ետը ետնան ազվեսը ետ ա տըեռնում, թա՝ ախեր հավատըս կյամ չի, թա օցը հո՞մց կըկարե ինոյի փոսեն մաշը, ծըլվըծալ անե, վըեր մարթը ընդեղան նրան տոնա օնեն, հալա մին նորից նի մըտե հանե՛ ընդեղ, հղըցն դըազեն մին փոս կա, նի մըտե փոսը, տըեսնամ տրա ըռեխը հինչ ա՛, վըեր ընդեղան քեզ տոնա օնեն տինի ծուցումը, թըքցընե: Վըեր տի յա ասում, մարթին սըերաց միջըր կյամ ա տըեղը: Օցն էլ ասում ա.—Են լը՞մ կարել, հենց տոն մեհննոյ նի կըմըննեմ, կըտեսնաք:

Օցը վըեր նի յա մննում փոսը, ժըլվըժալ անում, թա նշանց տա հոնց ա իլալ, աղվեսը մարթին աշկավ ա անում: Վըեր աշկավ ա անում, մարթը մին զըեռ քար յոր ա օնում օցեն կըլիսեն կյամ, ըսպանում:

Հտեղ մարթը վըեր օցեն ըսպանում ա պըրծնում, աղվեսը ես ա տըեռնում, մարթին ասում.—Դե ես քեզ էս լուլոթունն ըրե, կյանքը ըզըդեցե օցեն ծեռքան, մեհենգլ քըզանա վըել մին պեն լըմ օզում, լիճա էրկու հավ տո, օտըեմ: Մարթը թա՝ լավ, վըեր կըբյինամ շենը, հավերը յոր կօնեմ, կյամ ըստեղ:

Էտ մարթը տրանա ետը տըեղատ քյինամ ա շենը, շենին շները հվաքած կյամ, վըեր ըղվեսին փոնե: Աղվեսը վըեր հըորշանա եշում ա տըեռնում համբին էտ մարթն ա շները հվաքած կյամ ձկրան հետան, փախճում ա, նի մննում մին քոլ էտ մարթը շները հետան ըրած կյամ ա շոռ կյամ ըղվեսին քթինում, փոնում խեխտում, ետնան թա. «Եան՝ անդար, էտ շորս շիհանուց մորթետ եր կալած հիշտեղ ը՝ օզում քյինաս, գլուղում լը՝ ս, վըեր ծընոքաս կարել լըս պըրծնես: Հստեղ աղվեսը մետն ա քցում օցեն ասածը, թա հինչու հետե էրկու վըննանուն լուլոթուն ընելի չի, իտի ըսելիս խեխտվում ա, էտ մարթը տրան յոր ա օնում, տանում մաշկում, մորթեն տուա օնում:

